

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Ք Ե Ը Ե Ն Յ Ի Ի

Г. Л. КАРАГЕЗЯН. *Армения и армяне во французской литературе XI—XIV веков*. Изд-во АН АрмССР, Ереван, 1988, 140 с.

Մշակութային հին ու հարուստ ավանդույթներ ունեցող ժողովուրդների մշակույթի, այդ թվում նաև գրական-րանահյուսական փոխառնությունների ուսումնասիրությունը ունի դիտակուն արդիական նշանակություն ոչ միայն տվյալ ժողովուրդների պատմության, այլև համաշխարհային քաղաքակրթության զարգացման պատմական գործընթացը ճիշտ հասկանալու և արժեքավորելու համար:

Այս մեծ պրոցեսի ուսումնասիրության համար առաջնակարգ կարևորություն ունի Արևելքի և Արևմուտքի մշակութային փոխադրոսների խնդիրը, որն արդեն ավելի քան երկու հարյուրամյակ է, ինչ իր վրա է դաժել տարրեր մասնագետների սեկտուն ուշադրությունը: Այդ ուշադրությունը գնալով ոչ միայն չի խամրում, այլ ընդհակառակը, նորանոր փաստերի հայանարևրամար, փաստերի նորոգ բնութայնությունով, նոր մտակցումների ու մեթոդների մշակումով, նոր հայեցակետերի զարգացմամբ՝ մեր օրերում ավելի է խորանում, դառնում առավել արդիական ու հրատապ:

Դուրս կարագյոզյանի օձայատանն ու հայերի ֆրանսիական գրականության մեջ XI—XIV դարերում աշխատությունը նվիրված է այդ մեծ ու հրատապ խնդրի մասնակի գրասերությունների մեկի՝ միջնադարի հայ-ֆրանսիական գրական աղբյուրների, ավելի որոշակի՝ միջնադարյան ֆրանսիական գրականության մեջ Հայաստանի և հայերի, իրրև գրական-րանաստեղծական ֆենոմենի արտացոլման ուսումնասիրությունը:

Հայտնի է, որ ընդհանուր հայագիտության մեջ, ինչպես հայ և ինչպես մասնավոր օտար, հատկապես ֆրանսիացի մասնագետները, իրենց հայագիտական ուսումնասիրությունների ընթացքում այս կամ այն առիթով, այս կամ այն շափով անդրադարձել են միջնադարյան ֆրանսիական գրավոր աղբյուրներում Հայաստանին ու հայերին վերաբերող փաստերին ու հիշատակումներին: Բայց այդ անդրադարձումները հետապնդել են սոսկ պատմական, րանասիրական-աղբյուրագիտական նպատակներ, պատմական այս կամ այն մասնավոր փաստը, զրա աղբյուրագիտական արժանատիությունը ճշ-

գրտելու սահմանափակ նկատողումներ, հետևարար և հետո են եղել այդ բոլոր փաստերն ու ավյալները ամրոգացնելու, մեկ պատմաչրջանի մեջ դնելու և հանրագումարի բերելու և զրանք գրապատմական ու գրականագիտական մակարդակով միասնական հետադոտություն ենվարկելու դադախարից: Այնպես որ Գ. Կարագյոզյանի սույն աշխատությունը, ամրոգյությունով վերառած, նորություն է հայ գրականության պատմագիտության մեջ:

Միջնադարյան հայ-ֆրանսիական գրական կապերի իր ուսումնասիրությունը հեղինակը սահմանափակել է սոսկ XI—XIV դդ.: Հետագոտվող նյութի ժամանակագրական այս ընտրությամբ պատահական չէ, այն ունեցել է ոչ միայն պատմաժամանակագրական, այլև մեթոդաբանական ելակետի նշանակություն: Բանն այն է, որ XI—XIV դդ. պատմական այն ժամանակաշրջանն է, երբ հիմք է դրվում կիրիկյան հայ թագավորությանը, սկսվում են խաչակրաց արշավանքներն ու հայ-եվրոպական սերտ փոխառնությունները, սկզբնավորվում ու ծաղկում է ապրում ֆրանսիական ազգային գրականությունը և Հայաստանի ու հայերի թեման ֆրանսիական գրականության մեջ ենթարկվում է գաղափարական և տիպարանական փոխակերպումների: Այդ այն ժամանակաշրջանն է, երբ ֆրանսիական բուն ազգային գրականության մեջ աստիճանաբար ձևավորվում, կազմակերպվում, գրական-րանահյուսական տարրեր ժանրերի մեջ իր վերջնական ավարտուն տեսքն է ստանում Հայաստանի ու հայերի կերպարը, որի մասնագիտական ինքնատիպ բնությունն է նվիրված սույն աշխատությունը:

Եվ ժամանակագրական այս կտրվածքի բնորոշումը ու բնութայնամբ էլ հեղինակը բերում է մի շատ կարևոր նորություն ոչ միայն հայ-ֆրանսիական գրական կապերի, այլև առհասարակ Արևելք-Արևմուտք գրական փոխադրոսների ուսումնասիրության պատմության մեջ: Հայտնի է, և այդ մասին հատուկ ընդդեմված է գրքի ներածությունում, որ ֆրանսիական գրականության մեջ Արևելքի թեմայի ներթափանցման խնդրով զբաղվող գրականության արտասահմանյան, մասամբ և սովետական

պատմարանները մինչև այժմ այդ ներթափանցումների ժամանակագրական սկզբնակետը սամանափակել են սոսկ XV—XVII դդ., այն դեպքում, երբ այդ դարերը ոչ թե սկզբնակետ են, այլ Արևելքի թեմայի ու գրականության ներթափանցման խիստ ինտենսիվացման ժամանակաշրջան: Նման սահմանափակումը համարելով Ֆրանսիացի համեմատաբանների մեթոդաբանական սխալ էլակետի արդյունք, Լորր ամբողջ միջնադարը դուրս էր դրվում նրանց հետազոտության ոլորտից, Գ. Կարագյուզյանը մյուսգոմայն արդարացիորեն հետազոտության հատուկ առարկա է դարձնում հասուն միջնադարի հայ-ֆրանսիական գրական կապերը և այդ գրինակով ապացուցում նաև Արևելք-Արևմուտքի գրական փոխազդեցությունների վաղեմությունն ու գիտական պրոբլեմայնությունը, ընդլայնում դրանց ժամանակագրական սահմանները, դրանով իսկ մի նոր, առաջադիմական քայլ կատարելով հիշյալ խնդրի ուսումնասիրման պատմության մեջ:

Աշխատության բերած նորությունը, սակայն, միայն թեմայի և հետազոտվող ժամանակաշրջանի ընտրությունը չի սահմանափակվում: Նորություն են այն էլ կարևոր նորություն է բերում մեր գրականագիտության մեջ հեղինակը իր ընդգրկած նյութով, այդ նյութի բովանդակության բացահայտումներով և նյութի վերլուծության մեթոդով ու եղանակներով:

Գ. Կարագյուզյանը նախ լավ զննել և ուսումնասիրել է քննարկվող ժամանակաշրջանի պատմական իրականությունը, հայ-ֆրանսիական միջնադարյան հարաբերությունների սուցիալ-քաղաքական, տնտեսական, մշակութային ու գաղափարաբանական գրեթե բոլոր էական ազդակներն ու դրոպատճառները և դրանց հիմքի վրա քննել XI—XIV դդ. հայ-ֆրանսիական գրական առնչակցությունները: Ապա, ելնելով իր բուն նպատակից, նա մեծ բարեխղճությամբ ու մանրակրկիտությամբ զննել է ոչ միայն հետազոտվող ժամանակաշրջանի, այլև նախընթաց դարերի լատինական ու հին ֆրանսիական բոլոր այն պատմական, գրական, վիպական-բանահյուսական սկզբնաղբյուրները, որոնց մեջ որևէ ահնարկ կամ հիշատակություն է եղել Հայաստանի և հայերի մասին: Այդ կերպ նա գիտական շրջանառության մեջ է դնում բազմաթիվ նոր փաստեր ու տվյալներ, որոնք կարևոր նըշանակություն ունեն ոչ միայն տվյալ աշխատության, այլև հայագիտության տարբեր բնագավառների համար:

Այստեղ կամենում ենք մատնանշել միայն մեկ փաստ, վկայված XIV դարի իտալական և ֆրանսիական գրավոր աղբյուրներից: Գրքում (էջ 37) բերված է XIV դարի ֆլորենցիացի մա-

տենագիր Զովանի Վիլանիի վկայած հայկական մի լեզվի, կապված մոտավոր Հասան խանի և հայոց Հեթում թագավորի դստեր ամուսնության հետ: Երբ Հասան խանը դառնում է թագավոր, նա գնապաններ է ուղարկում Արևելքի բոլոր կողմերը իր համար ամենազեղեցիկ աղջկան կին ուզելու: Պարզվում է, որ ամենալքնազն ու իմաստունը հայոց արքայադուստրն է, որի ձեռքն էլ խնդրում են Հասանի դեսպանները: Հայոց թագավորը ընդունում է առաջարկությունը, բայց միայն աղջկա համաձայնության պայմանով: Աղջիկը խոհեմաբար հայտարարում է, որ ինքը համաձայն է, եթե դա հաճելի է իր հորը, բայց մի պայմանով, որ ինքը հեթանոսի կին դառնալուց հետո էլ կմնա իր հայրատին, կերկրպագի Քրիստոսին: Աղջկա պայմանը ընդունվում է, նա դառնում է Հասանի կինը: Ամենիս անց հայոց արքայադուստրը ծնում է մի հրեշ, Հասան խանի իմաստունները եզրակացնում են, որ նրա կինը խախտել է ամուսնական հավատարմությունը և նա պետք է այրվի խարուկի վրա, ևրեխայի հետ միասին: Կինը պատժից առաջ խնդրում է ընդունել սուրբ հաղորդություն, իսկ երեխային՝ մկրտություն: Մկրտության ժամանակ հրեշ մանուկը դառնում է մի շքեղ երեխա: Մոր անմեղությունն ապացուցվում է, իսկ Հասան խանն ու իր ժողովուրդը՝ քրիստոնեություն են ընդունում:

Այս ամբողջ լեզվեզը, որոշ տարբերություններով հանդերձ, գրեթե նույննում է մեր Օնասնա ծոբրա ժողովրդական վեպի առաջին չյուղի՝ Բաղդադի կուսպաշտ խալիֆայի և հայոց խաչապաշտ թագավորի դստեր՝ Մովինարի ամուսնության և սրբադան երկվորյակների ծընընդյան պատմության հետ, որի վրա, որքան մեզ հայտնի է տպագրված աշխատություններից, այլ էպոսագետներից ոչ ոք առայժմ ուշադրություն չի դարձրել: Կարևորը, սակայն, այն է, որ մեր վեպի առաջին չյուղի այդ միջադեպը, թեպետ պատմական այլ անունների հետ կապված, միջնադարում այնքան ժողովրդականություն է վայելել, որ XIV դարում հայտնի ու տարածված է եղել Եվրոպայում անգամ և ընկալվել է իրրև քնիկ հայկական լեզվի:

Աշխատության մեջ կան այսպիսի մի շարք նոր ուշագրավ փաստեր ու վկայություններ, որոնք կարող են ընդլայնել հայագետների մասնագիտական տեսադաշտը և նոր լույսի տակ դիտել տալ տարբեր խնդիրների ուսումնասիրությունը:

Գ. Կարագյուզյանն իր ուսումնասիրության ոլորտն է ներառել միջնադարյան ֆրանսիական գրական ու բանահյուսական տարբեր աղբյուրներ, սկսած «Ռոլանդի երգը» հերոսավեպից և մեկ տասնյակի շփի վիպերգերից, պատմական

տարրեր տարեգրություններից ու ժամանակագրություններից վերջացրած նշանավոր ճանապարհորդների ուղեգրություններով (Պլանո Կարպինի, Գիլոմ Թուրրուկ, Մարկո Պոլո, Ժուրդեն Գև Սևվերակ), Հեթումի պատմությանը և ասպետական վեպի փոխարկվող ժան Արասացու «Մեկուգինյակ» և Ջոն Մանդևիլի «Ծամաբով ու ծովով ճամփորդություն»:

Տարաբնույթ ստեղծագործությունների համադրումն ու քննությունը հեղինակի համար ունեցել է ոչ թե սոսկ աղբյուրագիտական նշանակություն, այսինքն՝ Հայաստանի ու հայերի թեման սոսկ արձանագրողի ու անդրադարձնողի արժևոյթ, այլ հիմնականում և զխավորապես զրուսացածական և գրականագիտական իր առաջադիր խնդիրը քննելու և լուծելու միջոց:

Հեղինակի հիմնական նպատակն է եղել տարբեր դարերի ու տարրեր բնույթի գրական-վիպական ստեղծագործությունների մեջ հետևել ու բացահայտել հայկական թեմայի անդրադարձման ոչ թե սոսկ քանակական հատկանիշները, այլ նրա դարից դար, ժանրից ժանր կատարած որակական փոխաձևումները, նկատել ու նկատելի դարձնել ֆրանսիական միջնադարյան գրականության մեջ տարաշխարհիկ հայկականի գրական զեղազիտական ընկալումների շրջափոխությունը՝ դրանց պատմատիպաբանական հիմքերի բացահայտումներով: Այս խնդիրը լուծելու նպատակով Գ. Կարապետյանը առաջնորդվել է մի կողմից պատմաժամանակաբանական սկզբունքով, հետևելով XI—XIV դդ. ֆրանսիական գրականության տարրեր ստեղծագործությունների մեջ հայկական թեմայի զարգացման պատմական փուլերին ու միտումներին, մյուս կողմից՝ այդ վերընթաց զարգացման ներստում բացահայտել է հայկական թեմայի բնույթի վրա գրական տվյալ ժանրի օրինաչափությունների ներգործությունը, ինչպես նաև հայկական թեմայի ներժանրային զարգացումը դիտել գրական այլ ժանրերի փոխազդեցության և փոխադարձ ներթափանցումների մեջ:

Նշված սկզբունքներով էլ կառուցված է ամբողջ աշխատությունը, որի 1-ին զուգարհնակում է XI—XIV դդ. ֆրանսիական հերոսավեպում հայկական թեմայի շրջափոխությունը, 2-րդ զուգարհնակում է հայկական թեման XI—XIV դդ. ճանապարհորդների ուղեգրություններում ու պատմագրական երկերում և վերջին զուգարհնակում Հայաստանն ու հայերը XIV դարի ապետական վեպում: Այդպես, պատմա-ժամանակագրական կայուն հիմքի վրա, ֆրանսիական ազգային զարգացող գրականության տարրեր ժանրերի համախմբումով ու քննությունով հեղինակը բացահայտում է ֆրանսիական միջնադարյան գրականության մեջ հայկա-

կան թեմայի ներթափանցման, աստիճանական զարգացման և վերջնական կերպավորման ամբողջական պատկերը: Իր քննությունը Գ. Կարապետյանը ասալ է տարել պատմահամեմատական մեթոդով, դրան զուգահեռ մեծ հարողությունը ու արդյունավետությունը կիրառել արդի բանագիտության և ազգագրության մեջ լայնորեն տարածված կառուցվածքային տիպաբանության մեթոդը և հանգել միանգամայն գոհացուցիչ արդյունքների: Կիրառած մեթոդի և փաստերի ներքին տրամաբանության հիման վրա հեղինակը եկել է այն եզրակացություն, որ նախ՝ հայկական թեմայի արտացոլման ամենաբնորոշ և ներկայացուցչական ժանրերն են վիպերգը, ասպետական վեպը և ուղեգրությունը, որոնց մեջ յուրային—օտարա երկհանգիստ տիպաբանական կաղապարում հայերն սկզբում մտել են երկրորդ «օտար» բաղադրիչի մեջ, բայց սոցիալ-պատմական իրադարձությունների հետագա զարգացման՝ Ֆրանսիա—Հայաստանի փոխառնությունների առավել ինտենսիվացման ու կոնկրետացման հետևանքով «հայ-օտար» բաղադրիչը աստիճանաբար փոխաձևվում է «հայ-յուրային» հասկացության: Ապա, քննարկված ժանրերի համակարգում հայ իրականությունը առավել ռեալիստորեն է պատկերված ուղեգրության ժանրում, որն իր հերթին ներպատկեր է թեմայի առավել կոնկրետացմանը, առարկայացմանը, ռեալիստական միտումների զարգացմանը մյուս ժանրերում, մասնավորապես ասպետական վեպում: Թեմայի այս ներժանրային ու միջժանրային փոխադարձ սրբաբանումները, համալրումներն ու զարգացումը ի վերջո, պատմական ու գրական յուրաքանչյուր դարաշրջանի փոփոխվող զրգապատճառների ազդեցության շնորհիվ, ամբողջացնում են Հայաստանի ու հայերի գրական-բանաստեղծական կերպարը, հանգեցնում մի գրական ընդհանուր դիմագծի, որը դառնում է յուրահատուկ նախանշան-ինդիկատոր ուսումնասիրվող ժամանակաշրջանի հայ-ֆրանսիական հարաբերությունների համար քնդհանրապես:

Հեղինակը թեմայի քննությունից հանգել է նաև այլ ուշադրավ եզրակացության, որ կարևոր նշանակություն ունի նաև ֆրանսիական միջնադարյան գրական ժանրերի զարգացման գործընթացն ըմբռնելու համար: Հայկական թեմայի բնույթի փոխակերպումների ուսումնասիրությունը ինքնին ցուցաբանում է ֆրանսիական գրականության մեջ ուղեգրության ժանրի փոխաձևման ընթացքը և վերափոխումը ասպետական վեպի:

Այս համազիչ ապացույցներին ու եզրակացություններին զուգահեռ, գրքում կան նաև մի շարք մասնավոր հարցերի քննություններ ու եզ-

առհանդուրդներ, որոնք նույնքան ուշագրավ են և արժանի հատուկ նշման: Դրանցից մեկը հայ-ազգի Հայտոնի կամ Հեթումի համաշխարհային հռչակի արժանացած հին ֆրանսերեն ու լատիններեն լեզուներով գրված պատմության քննությունն ու արժեքավորումն է: Գ. Կարազյոզյանը միանգամայն ճիշտ գնահատական է տալիս Հեթումի այդ նշանավոր երկին, ճիշտ համադրումներ ու համեմատություններ կատարում Հեթումի պատմության և ժամանակի եվրոպական ճանապարհորդների Արևելքում կատարած ուղեգրությունների միջև, ճշտորեն գնահատում այդ երկի պատմական, քաղաքական արժեքն ու մասալականացման պատճառները եվրոպայում և ճիշտ արժեքավորում Հեթումի պատմության քաղաքական իմաստն ու նպատակը, որ հանգում է եվրոպացիների կողմից քրիստոնեական Արևելքի և ամենից առաջ Հայաստանի աղատագրման գաղափարին:

Հաջորդ՝ հայկական գրավոր և բանավոր ավանդության մեջ պահպանված այն մոտիվների, հատկապես Արարատ լեռան և Նոյի տապանի, քառասուն մանկանց, վանականի և հրեշտակի, այցը Սազավորի ու բաղբի կրոնական և աշխարհիկ ավանդազրույցների շարքն է, որ այլազգի գրական ու էթնոմշակութային միջավայր ներթափանցելով, ենթարկվել է համապատասխան փոխակերպումների, հարմարեցվել այդ նոր միջավայրի պահանջներին, մի միջգրական ուշագրավ ընթացք, որը բացահայտելի, գիտական քննությունների է ենթարկել հեղինակը և ցույց տվել, թե ինչ ձևերով է ֆրանսիական միջնադարյան գրականությունը լուրատեսակ կանոնարկման ենթարկել հայկական ու Հայաստանին վերաբերող գրական-քառասունական տվյալները:

Չկամենալով խորամուխ լինել առանձին մանրամասների մեջ, հարկ է միայն ընդգծել, որ Գ. Կարազյոզյանը կատարել է գիտական լուրջ ու խորահմուտ աշխատանք, հետազոտել հայ-ֆրանսիական գրական փոխառությունները:

Մի մի այնպիսի ժամանակաշրջանի արդյունքներ, որոնք մինչև այժմ այդպիսի ամբողջականությունում, մասնագիտական խորությամբ ու հմտությամբ չեն ուսումնասիրվել այդ գրականության պատմագիտության մեջ:

Գ. Կարազյոզյանի աշխատությունը նոր խոսք է համեմատական գրականագիտության մեջ, որը գալիս է լրացնելու ոչ միայն հայ-ֆրանսիական միջնադարյան գրական փոխադրանքների ցարդ պատշաճ ուսումնասիրված բացը, այլև որոշ շափով համալրելու Արևելք-Արևմուտք մշակութային փոխադրանքի մեծ ու արդիական խնդրի ուսումնասիրությունը: Այս և աշխատության մեջ ընդգրկված ու քննարկված գրական և արտագրական նյութի ուսումնասիրման առումով գրախոսվող աշխատությունն ունի ոչ միայն գրապատմական ու գրականագիտական, այլև պատմամշակութային կարևոր արժեք:

Վերջում կարևոր են համարում մեկ ցանկություն հայտնել հեղինակին, որ նա շարունակի գիտական իր պրոտոմները հայ-ֆրանսիական գրական (և ոչ միայն գրական) կապերի նախորդ և հետագա դարերի պատմության ուսումնասիրման ուղղությամբ: Գրքի ներածության մեջ համառոտակի, իսկ Վիեննայի «Հանդես ամսօրյալում» տպագրված իր հոդվածում առավել մանրամասն նա արդեն անդրադարձել է մինչև XI դարը եղած հայ-լատինալեզու գրական փոխադրանքներին: Այնպես որ Գ. Կարազյոզյանը դյուրությամբ կարող է խորացնել մինչև XI դարի այդ փոխադրանքի հետազոտությունը, միաժամանակ շարունակել XIV դարից հետո եկող հայ-ֆրանսիական գրական ու մշակութային փոխառությունների ուսումնասիրությունը: Գրախոսվող աշխատությունը վկայում է, որ տվյալ թեման գտել է իր հետազոտողին, որը և մեզ հիմք է տալիս անելու այս կարևոր առաջարկությունը:

Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բաճասիր. գիտ. գրկաուր